ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի հունիսի 16-ի ՀՕ-23 օրենքի 20.2-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին և 5.2-րդ մասեր.

«5.1. Հավաստագրի գործողության ժամկետում գործունեությունը դադարեցնելու դեպքում հարկ վճարողը կարող է դիմել հարկային մարմին՝ հավաստագրի գործողության կասեցման համար՝ վերադարձնելով հավաստագրի իր օրինակը: Հարկային մարմինը մեկ աշխատանքային օրվա ընթացքում դիմումը ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվանից մինչև հավաստագրով ներառված ժամկետի ավարտը կասեցնում է հավաստագրի գործողությունը:

5.2. Սույն հոդվածի 5.1-ին մասում նշված հարկ վճարողները գործունեությունը վերսկսելիս առնվազն մեկ աշխատանքային օր առաջ դիմում են հարկային մարմին՝ հավաստագրի գործողությունը կասեցումից հանելու նպատակով: Հարկային մարմինը մեկ աշխատանքային օրվա ընթացքում արտոնությունից չօգտված ամիսների համար հարկ վճարողին տրամադրում է նոր հավաստագիր:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**